Հավելված N 1
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունվարի 29 -ի N 110 - Ա որոշման

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նորագյուղ թաղամասն ընդգրկող՝ սույն որոշմամբ սահմանված տարածքում, DOWNTOWN քաղաքաշինական ծրագրի իրականացման նպատակով տարածքում սեփականության օտարման գործընթացի ընթացքում պետության և ձեռք բերողի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը սահմանող պայմանագրի պայմաններում ներառել հետևյալ կարգավորումները՝

1. Ձեռք բերողը պարտավորվում է օտարումների գործընթացն սկսել բլրային հատվածից, որտեղ յուրաքանչյուր առանձին լոտում առկա գույքերի ամբողջական իրացումից հետո միայն ձեռք բերողի համար կստեղծվի հնարավորություն օտարումներ իրականացնել հարթավայրային հատվածում 1:2 հարաբերակցությամբ:

2. Ձեռք բերող ընկերությունը կարող է իրականացնել բացառապես ծրագրի օպերատորի գործառույթը և չի կարող հանդիսանալ լոտի ձեռք բերող և/կամ կառուցապատող:

3. Տարածքում առկա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումն իրականացվելու է համայնքի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ